ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԲԱԳՐԱՏԱՇԵՆԻ ՑԱՄԱՔԱՅԻՆ ԱՆՑՄԱՆ ԿԵՏԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ-ՊԵԿ-ՀՄԱԱՇՁԲ-25/20-Ք

ք. Երևան «19» դեկտեմբերի 2025 թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն», ի դեմս գլխավոր քարտուղար Էդգար Գևորգյանի, որը գործում է «ՀՀ պետական եկամուտների կոմիտեն»-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՏՐԱՆՍՆԱԽԱԳԻԾ» ԻՍՏԻՏՈՒՏ ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Էդուարդ Մարտիրոսյան, որը գործում է ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ պետական սահմանի Բագրատաշենի ցամաքային անցման կետի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **24000000 (քսանչորս միլիոն)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց

թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և

արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ՀՀ պետական եկամուտների կոմիտե»	«Տրանսնախագիծ» Ինստիտուտ ՓԲԸ
Հասցե՝ ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7	ք.Երևան, Դավիթ Անհաղթ 23
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 00802905
900011030526	Հ/Հ 1150000461811810
02647057	Բանկ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Էդգար Գևորգյան	Տնօրեն
	Էդուարդ Մարտիրոսյան
/ստորագրություն/	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված 1
« 19 » դեկտեմբերի 2025 թ. կնքված
ՀՀ-ՊԵԿ-ՀՄԱՇՁԲ-25/20-Ք ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի*						
Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չ/մ	ընդհանուր գին ՀՀ դրամ	քանակ	Աշխատանքների կատարման ժամկետը և վայրը
	ՀՀ պետական սահմանի Բագրատաշենի ցամաքային անցման կետի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում CPV- 71241200/502	Իրականացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Բագրատաշենի ցամաքային անցման կետի նախագծման աշխատանքներ ըստ հետևյալի. **Նախագծման համար ներկայացվող առաջադրանքները.** 1. Նախատեսել տրանսպորտային միջոցների մանրամասն զննման մասնաշենք՝ մոտ 700 քմ: Ելնելով լիցենզավորված կազմակերպության կողմից տրված հետազննության արդյունքներից՝ կառույցի տեխնիկական վիճակը, ընդհանուր առմամբ, գնահատվում է խիստ անբավարար ու վթարավտանգ, իսկ վնասվածության մակարդակը՝ ըստ գործող ՀՀՇՆ 20.04-2020 նորմերի և հետազննության մեթոդական ցուցումների չափանիշների, դասվում է 4-րդ աստիճանի: Համաձայն փորձագիտական եզրակացության, կառույցը ենթակա է ապամոնտաժման: Կառույցի ապամոնտաժումը կարող է իրականացվել զրոյական նիշից, պահպանելով հիմքերը, բեռնատար հարթակը և դիտային հարթակը, իսկ դրանցում մեջբեռնված շրջանակների սյուները, պարզունակները ու վերնածածկի հեծանները պիտանի են կրկնակի օգտագործման համար: Դրանից ելնելով՝ անհրաժեշտ է կատարել առանձին-առանձին տեխնիկատնտեսական հաշվարկ՝ մի դեպքում, երբ կառույցը ամբողջական կապամոնտաժվի և կվերակառուցվի, իսկ մյուս դեպքում երբ կառույցը կապամոնտաժվի մասնակի /պահպանելով չվնասված հատվածները/ և կվերակառուցվի: Անհրաժեշտ է իրականացնել. - հին պահեստային շենքի քանդման աշխատանքներ՝ համաձայն տեխնիկական վիճակի մասին տրված եզրակացության,	դրամ	24000000	1	Աշխատանքներն իրականացվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացույցային օրվա ընթացքում: ՀՀ Տավուշի մարզ, գ. Բագրատաշեն, 19-րդ փողոց թիվ 69

		- հակահրդեհային ազդարարման էլեկտրոնային համակարգ, այդ թվում՝ համապատասխան վահանակ կրակմարիչներով և այլ անհրաժեշտ պարագաներով /համաձայն համապատասխան գերատեսչության կողմից սահմանված չափորոշիչների/, - թվային տեսահսկման համակարգ, - ներքին էլեկտրամատակարարում և լուսավորություն, - ըստ անհրաժեշտության՝ ներքին ջրամատակարարման և ներքին կոյուղագծերի վնասված հատվածների վերականգնում, - հեռահաղորդակցության համակարգ (ներքին ինտերնետ կապ՝ օպտիկամանրաթելային, հեռախոսային կապ և այլն), - պահեստային հատվածում դարակաշարեր՝ մեծածավալ և ծանրաքաշ ապրանքների համար, - աշխատասենյակ 4 աշխատողի համար՝ 28-30 քմ մակերեսով, - հանգստի սենյակ 2 հոգու համար՝ սանհանգույցով և համապատասխան կահավորումով /համաձայնեցնել պատվիրատուի հետ/, - իրերի զննման սենյակ /համաձայնեցնել պատվիրատուի հետ/, - զննման սենյակին կից առանձին սենք դարակաշարով և չիրկիզվող պահարանով, մետաղական դռնով (3 լեզվականի փականով), - աշխատասենյակում, հանգստի սենյակում, իրերի զննման սենյակում ջեռուցում էլեկտրական տաքացուցիչներով, - մինչև 10 տոննա մեքենաների բարձրացման սարքավորում, - մուտքի մասում 2 հատ գլանափաթեթային դարպաս: 2. Դեպի Վրաստան ելքի հատվածում նոր կառուցված 744 քմ մակերեսով մասնաշենքի վերանորոգման և վերակառուցման աշխատանքներ. - գոյություն ունեցող միջնորմների քանդում և նոր միջնորմների կառուցում, - անձնագրերի ստուգման թվով 8 տաղավարների կառուցում, - ներքին հատակագծային փոփոխությունների իրականացում, - թվային տեսահսկման համակարգ, - ներքին էլեկտրամատակարարում և լուսավորություն, - ներքին ջրամատակարարման և ներքին կոյուղագծեր, - ջեռուցման համակարգեր, - հեռահաղորդակցության համակարգ (ներքին ինտերնետ կապ՝ օպտիկամանրաթելային, հեռախոսային կապ և այլն),				

		- հակահրդեհային ազդարարման էլեկտրոնային համակարգ, այդ թվում՝ համապատասխան վահանակ կրակմարիչներով և այլ անհրաժեշտ պարագաներով: 3. Գոյություն ունեցող վարչական շենքի վերակառուցման և վերանորոգման աշխատանքներ. - գոյություն ունեցող միջնորմների քանդում և նոր միջնորմների կառուցում, - արտաքին պատերի քանդում և նոր ալյումինե վիտրաժների կառուցում, - անձնագրերի ստուգման թվով 9 տաղավարների կառուցում, - տուռնիկետների նախատեսում 2 հատ, - ներքին հատակագծային փոփոխությունների իրականացում, - հեռահաղորդակցության համակարգի ձևափոխում՝ ըստ նոր պահանջների (ներքին ինտերնետ կապ՝ օպտիկամանրաթելային, հեռախոսային կապ և այլն), - ներքին էլեկտրամատակարարման և լուսավորության ձևափոխում՝ ըստ նոր պահանջների, - ներքին վերանորոգման աշխատանքներ՝ ներառյալ 2-րդ հարկը ըստ անհրաժեշտության: 4. Նոր կառուցված բեռնատար տրանսպորտային միջոցների խորը զննման մասնաշենքի վեանորոգման և վերակառուցման աշխատանքներ. - ներքին հարդարման աշխատանքներ, - թվային տեսահսկման համակարգ, - ներքին էլեկտրամատակարարում և լուսավորություն, - ներքին ջրամատակարարում և ներքին կոյուղագծեր, - ջեռուցման համակարգեր, - հեռահաղորդակցության համակարգ (ներքին ինտերնետ կապ՝ օպտիկամանրաթելային, հեռախոսային կապ և այլն), - հակահրդեհային ազդարարման էլեկտրոնային համակարգ, այդ թվում՝ համապատասխան վահանակ կրակմարիչներով և այլ անհրաժեշտ պարագաներով, 5. Անցակետի սկզբնամասում նախատեսել մետաղական շվաքարան դիզայներական լուծումներով (էսքիզային տարբերակները նախօրոք համաձայնեցնել պատվիրատուի հետ), շվաքարանը նախատեսել այնպիսի չափերով, որը կպաշտպանի անցակետի սկզբնամսում տեղադրվելիք նոր ստատիկ կշեռքին անձրևից և ձնից.				

		6. Անցակետի սկզբնամասում՝ շվաքարանի տակ, նախատեսել ստատիկ 100 տ կշռողականությամբ կշեռք. 7. Վարչական շենքին հարակից շվաքարաններին կից նոր մետաղական ծածկերի իրականացում՝ յուրաքանչյուր հատվածում մոտ 500 քմ մակերեսով. 8. Գոյություն ունեցող շվաքարանների տակ՝ ելքի հատվածքում, նախատեսել թվով 2 ստատիկ 100 տ կշռողականությամբ կշեռքներ. 9. Ելքի հատվածում ձևափոխել մարդատար տրանսպորտային միջոցների ուղեհոսքերը՝ գոյություն ունեցող 4-ը դարձնելով 7-8, իսկ բեռնատարների համար նախատեսված ուղեհոսքերը նախատեսել 3 հոսքուղի. 10. Մուտքի հատվածում ձևափոխել մարդատար տրանսպորտային միջոցների գոյություն ունեցող ուղեհոսքերը՝ դարձնելով 5 հատ, իսկ բեռնատարների համար նախատեսված ուղեհոսքերը՝ նախատեսել 3-4 հոսքուղի՝ հնարավորության դեպքում: 11. Տրանսպորտային միջոցների ստուգման տաղավարների նախատեսում ծածկարանների տակ՝ թվով 46 հատ (տեղադիրքերը և էքիզային տարբերակը լրացուցիչ կտրամադրվի). 12. Գոյություն ուեցող պոմպակայանի մասնաշենքի՝ ներառյալ սարքավորումները, ինչպես նաև հարակից թվով 2 ջրամբարների ապամոնտաժում և նոր պամպակայանի կառուցում իր համապատասխան ջրամբարներով . 13. Անցակետի ներհրապարակային կոմունիկացիաների նախատեսում, այդ թվում՝ էլեկտրամատակարարման, լուսավորության, գազատար խողովակաշարերի, կոյուղագծերի, ջրամատակարարման, ջրահեռացման, հեռահաղորդակցման, տեսահսկման, մուտքերի հոսքերի, հրդեհի տեղեկացման և տարհանման կառավարման, հրդեհի ահազանգման և հակահրդեհային ավտոմատիկայի համակարգերի նախատեսում. 14. Տարածքում արտաքին մետաղական ցանկապատերի նախատեսում 4 մ բարձրությամբ, ինչպես նաև ուղեհոսքերն առանձնացնող շարժական ցանկապատերի նախատեսում, ցանկապատերում ներառել թվով 3 ավտոմատ կառավարվող դարպասներ. 15. Բեռնատար տրանսպորտային միջոցների համար մաքսակետից դեպի Հայաստան նախատեսել լրացուցիչ ելքի ճանապարհ, մինչև Հայաստանից ելքի օղակաձև հանգույց հասնելը՝ իր անցակետով և ուղեփակոցով: Ելքի ճշգրտված տեղը կտրամադրվի աշխատանքային կարգով.				

		16. Անցակետի սկզբնամասում նախատեսել թվով 4 բոլլարդային համակարգերի կառուցում /հատակից դուրս եկող/. 17. Տարածքի ներհրապարակային բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ: 18. Նախատեսել արևային կայանների տեղադրում՝ ըստ մաքսակետի տարեկան էլեկտաէներգիայի սպառման ծավալների: **Նախագծման աշխատանքներին ներկայացվող պահանջները** • աշխատանքային փաստաթղթերը կազմել համաձայն ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. թիվ 128-Ն հրամանի. • Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է ներկայացվեն թղթային /5 օրինակից/ և էլեկտրոնային տարբերակներով՝ հայերեն և ռուսերեն լեզուներով.				

*** Համաձայն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի դրույթների՝ մասնակիցը պետք է ունենա քաղաքաշինական փաստաթղթերի կազմման (բացառությամբ կոնստրուկտորական և ճարտարապետական մասերի) առնվազն 2-րդ դասի լիցենզիա՝ հետևյալ համապատասխան ներդիրներով. ծածկագիր 05, 08, 10**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀՀ պետական եկամուտների կոմիտե»
Հասցե՝ ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
900011030526
02647057
Էդգար Գևորգյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Տրանսնախագիծ» Ինստիտուտ ՓԲԸ
ք.Երևան, Դավիթ Անհաղթ 23
ՀՎՀՀ 00802905
Հ/Հ 1150000461811810
Բանկ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրեն
Էդուարդ Մարտիրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«19» դեկտեմբերի 2025 թ. կնքված
ՀՀ-ՊԵԿ-ՀՄԱՇՁԲ-25/20-Ք ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/Հ	բյուջետային ծախսերի տնտես. դասակ. հոդվածը	Աշխատանքների անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2025թ. պետական բյուջեի միջոցների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում												
			Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	**Ընդամենը**
1	5134	ՀՀ պետական սահմանի Բագրատաշենի ցամաքային անցման կետի վերակառուցման նախագծանախահաշվայի ն փաստաթղթերի կազմման աշխատանքներ												24000000	24000000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀՀ պետական եկամուտների կոմիտե»
Հասցե՝ ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
900011030526
02647057
Էդգար Գևորգյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Տրանսնախագիծ» Ինստիտուտ ՓԲԸ
ք.Երևան, Դավիթ Անհաղթ 23
ՀՎՀՀ 00802905
Հ/Հ 1150000461811810
Բանկ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրեն
Էդուարդ Մարտիրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
« 19 » դեկտեմբերի 2025 թ. կնքված
ՀՀ-ՊԵԿ-ՀՄԱԱՇՁԲ-25/20-Ք ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 19 » դեկտեմբերի 2025 թ. կնքված
ՀՀ-ՊԵԿ-ՀՄԱԱՇՁԲ-25/20-Ք ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4
« 19 » դեկտեմբերի 2025 թ. կնքված
ՀՀ-ՊԵԿ-ՀՄԱՇՁԲ-25/20-Ք ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

_____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

_____
ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.